



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

Երևան, Բաղրամյան 19  
588-290

ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանին

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին

ՀՀ նարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանին

ԺԽ-Ե-0744/09

29 հոկտեմբերի 2009թ.

### Հաղորդում հանցագործության մասին

Ես՝ Ջարուհի Փոստանջյանս, և ՀՀ այլ քաղաքացիներ 2009 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ կառավարության շենքի առջև պաստառներով կազմակերպել էինք բողոքի գործողություն՝ ընդդեմ **հայ-թուրքական** արձանագրությունների վավերացման, ինչպես նաև՝ ի անհամաձայնություն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ երեկ ՀՀ Ազգային ժողովի դահլիճում՝ հնչեցրած այն մտքի, թե «Հայոց աշխարհի շահերը տարբեր են»: Մեր բողոքի գործողության նպատակն էր հիշեցնել, որ «Հայոց աշխարհի շահերը միասնական են»:

Բողոքի գործողությունը սկսվեց նախատեսված ժամին՝ 11:00-ին: Ի տարբերություն մեկ շաբաթ առաջ նույն տեղում կայացած բողոքի գործողության՝ այս անգամ ոստիկանների ապօրինի արարքը միայն մեր առջև ոստիկանական պատ կազմելու մեջ էր, որը նպատակ ուներ պաստառները փակել անցորդների աչքից:

Բողոքի գործողության երկրորդ մասը, որը նախատեսված էր անցկացնել Բաղրամյան պողոտայում՝ նախագահական նստավայրի դիմացի մայթին, մեզ չհաջողվեց: Երբ շուրջ երկու տասնյակի հասնող ցուցարարներս խաղաղ երթով հասանք մինչև Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկ, ԱԺ գլխավոր մուտքից շուրջ 30 մետր հեռավորության վրա մեր ճանապարհը փակեցին ոստիկանության համազգեստով շուրջ 25 անձինք՝ Երևանի Արաբկիրի բաժնի ոստիկանության կապիտան ներկայացած ոստիկանի գլխավորությամբ: Նրանք կենդանի շղթա կազմեցին և կասեցրեցին մեր երթը՝ այդ կերպ հերթական անգամ կոպտորեն ոտնահարելով ինչպես բողոքի մասնակիցների քաղաքացիական իրավունքները, այնպես էլ ՀՀ օրենսդրությունը: Քանի որ մենք առաջ գնալու հնարավորությունից զրկված էինք, կանգ առանք և ոստիկաններից խնդրեցինք մեզ տրամադրել որևէ փաստաթուղթ՝ մեր տեղաշարժը խոչընդոտելու հիմքի վերաբերյալ, սակայն մեր խնդրանքը մերժվեց: Ըստ ոստիկանների՝ իրենք էլ չգիտեին, թե որ օրենքի հիման վրա են խոչընդոտում մեր տեղաշարժը: Միակ պատճառաբանությունը հետևյալն էր, թե նախագահը միջոցառում է անցկացնում և իրենք նպատակահարմար չեն գտնում

մեր տեղաշարժը: Մենք՝ ցուցարարներս, փորձեցիք այդ վայրում՝ Բաղրամյան փողոցում, շարունակել մեր բողոքի գործողությունը: Երբ պաստառներով կանգնած երգում և վանկարկում էինք, ոստիկանները սկսեցին հրել ու ետ մղել մեզ և պատռեցին Հայաստանի ու Արցախի քարտեզը: Ոստիկաններից մեկը, որը փոխգնդապետի ուսադիրներով էր, ինձ սպառնում էր, թե ես խուլիզանություն եմ անում:

Փաստորեն՝ մեկ շաբաթ առաջվա և այսօրվա մեր իրականացրած բողոքի գործողությունները ոստիկանների կողմից ենթարկվեցին ճնշման: Ոստիկանների նման վերաբերմունքը միանշանակ փաստում է, որ ՀՀ նախագահի պաշտոնը զբաղեցնող Սերժ Սարգսյանը ահաբեկված է շուրջ երկու տասնյակ խաղաղ զուգարարներից և նրանց պաստառներից:

ՀՀ ոստիկանության աշխատակիցներին տեղեկացնում եմ, որ մենք օգտվում ենք մեր սահմանադրական իրավունքներից: Ոստիկանների կողմից վերը նշված գործողությունները ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների խախտում են: Խաղաղ զուգարարներից և նրանց պաստառներից պետք չէր խուճապի մեջ ընկնել և քրեորեն հետապնդելի առարկներ կատարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ համապատասխան ընթացք տալ սույն հաղորդմանը և օրենքով սահմանված կարգով արդյունքների մասին հայտնել ինձ:

**Զարուհի Փոստանջյան**

*ԱԺ պատգամավոր*

*«Ժառանգություն» խմբակցության անդամ*